46րդ ՏԱՐԻ ԹԻՒ 540 Ն. ՇՐՋ. ՅՈՒՆՎ. 31/13 ՓԵՏՐ. 1903 ՈՒՐԲԱԹ 15 ԶԻԼԳԱՏԷ 31 ՔԵԱՆՈՒՆԸ ՍԱՆԻ 1318

JOURNAL ARMÉNIEN
MANZOUMÉI-EFKIAR
38, Grand' Rue de la S-Porte, 38
CONSTANTINOPLE

ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
ՅՈՎՀԱՆՆԷՍ Ֆ. ԳԱՅՍԵՐԵԱՆ
ՈՐՈՒ Կ'ՈՒՂՂՈՒԻ ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԳՐՈՒԹԻՒՆ
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
38, Գուլը Արի Ճամբեք, 38
Խմբագրութեան չղրկուած գրութիւններ ետ չեն տրուիր.

# Մանզումէի Էֆքեար

ՀԱՅԱԳԻՐ ՕՐԱԹԵՐԹ ԱՌԱՒՕՏԵԱՆ
ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

منظومهٔ افكار
ارمنیجه یوی وسیاسی غزته‌در
صاحب امتیازی : اوجانس فرید

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

| | Տարեկան | Վեցամսեայ |
|---|---|---|
| Պոլսոյ համար | 80 ղր. | 50 ղր. |
| Գաւառներու համար | 108 » | 60 » |
| Արտասահմանի համար | 25 ֆր. | 13 ֆ. |

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ
Մէկ անգամի համար, տողը 5 դրուշ.
Մէկ անգամէն աւելի ծանուցմանց համար համաձայնութեամբ կը խօսուի.

10 ՓԱՐԱ — "ՄԱՆԶՈՒՄԷ,, ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԷՆ ՕՐ ԱՌԱՒՕՏԵԱՆ — 10 ՓԱՐԱ

## "ԸՆԾԱՅԱՐԱՆ,,

(ՆՈՐ ԱՌԱՋԱՐԿ ՄԸ)

Կորիւն վրդ.էն ետքը, Ճանիկեան Տ. Հայրը յուզեց հրապարակաւ ընծայարանի ա՛յնքան կարեւոր խնդիրը որ շուրջ կը դառնայ Հայ կղերականութեան բարձրացումին։ Ամուրի թէ ամուսնացած եկեղեցականութիւնը՝ ժամանակին յառաջդիմական ոգւոյն համաձայն՝ տակաւին չգտաւ իր բարձրութեան մակարդակը։ Հետեւաբար պէտք մըն է ասիկա, զոր անհրաժեշտ է լրացնել, էական խնդիր մը, որուն կարեւորութիւնը հայ մամուլը պարտաւոր է շեշտելու, զգացնելու համար դարմանի պէտքը հասարակութեան վիրաւորուած կրօնական արժանապատուութեան։

Կորիւն վարդապետ իր գրութիւնը գրեթէ նուիրած էր կեդրոնի հասարակութեան պէտքին, մինչդեռ ա՛լ աւելի կարեւորն էր գաւառայինը. զի Պոլիս՝ որ մեր համայնքին ամէնէն զարգացած և լուսաւորուած կեդրոնն է, իր քահանան պիտի ընտրէ՝ իր առ հասարակ զարգացած անհատները թողլով՝ ...

[...]

... ժողովուրդի՞ն, թէ իր հոգեւոր մեծերուն, վարչութեան։ Ձէ՛, Հայ եկեղեցականութիւնը իր եկեղեցիին պատւոյն եւ տրտունը պէտք չէ միայն այլ եւս, պէտք է դարմանը խորհուի այս խեղճութեան։

Հայ Եկեղեցին իր ծոցը Նարեկացիի, Շնորհալիի եւ.ի նման պանծալի դէմ-

[...]

... կրօնքն ալ։ Վարչութիւն մը այսքան դիւրին գործ մը կատարելուն մէջ ինչո՞ւ կ'ընկրկի, միթէ իրաւունք չունի՞նք, ընծայարաններու հաստատումով՝ կղերականութեան վարկին բարձրացումը ակնկալելու։

Կ. Ց. ՏԷՎԷԼԵԱՆ

## ԱՆԿԵՂԾ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Նախամօրմէս՝ իբրեւ միակ ժառանգութիւն, ունեցած հետաքրքրութիւնս ու գրական և ուսումնական խնդիրներու համար ունեցած հակումս ...

[...]

... մը զարգացած յաւակնոտներուն ու մանաւանդ ազգէս ինքնահաւաններուն հանդէպ միամիտ հակակրութիւն մը ունիմ ես։

ՕՐ. ԱՐՏԵՄԻՍ

## ՀԱԼԷՊ ԵՒ ԱՏԱՆԱ

(ԶՈՒԳԱԿՇԻՌ)

Հալէպ՝ Գըվէզ վտակին եզերքը շինուած, հարուստ ու արտաքախօս հին քաղաք մըն է, իսկ Ատանա՝ Սիհան գետին վրայ՝ բարեբեր ու Թրքախօս նահանգ մը։

—Հալէպ, որուն հողը աւազուտ ու պինդ, հետեւաբար ջրակարօտ է միշտ, գրեթէ բլրային դիրք մը ունի՝ կէս- ...

[...]

... ծեռ կը քամէ իր արիւնը, թէև երբեմըն վաղանցիկ ու խաբուսիկ գարուն մըն ալ կը վայելէ այդ սառուցիկ եղանակին մէջ, մինչդեռ Ատանա վատառողջ օդ մը ունի և իր խոնաւութենէն՝ չիտակը ամէն մարդ ալ չախորժիր անխտիր։

—Հալէպ խիտ է և քարերով շինուած, իսկ Ատանա ցրցքուն է ու աղիւսներով հիւսուած։

—Հալէպ բարձր տուներ ունի և նեղ փողոցներ. Ատանա՝ լայն փողոցներ և ցած տուներ։

—Հալէպ համայնատէր է և հոն՝ մէկ տունի մէջ քանի մը հատ ընտանիք մէկէն կը բնակի վարձքով։ իսկ Ատանա անհատապաշտ է և իւրաքանչիւր ընտանիք իրեն յատուկ տունը ունի։

[...]

—Հալէպցին ընդհանրապէս իր ծննդավայրին գերակշռութեանը համոզուած՝ կը կարծէ թէ հոնկէ դուրս չիկայ գեղեցիկ տեղ մը, մինչդեռ Ատանացին մտքի լայն հորիզոն մը ունի այդ մասին։

—Հալէպ պանդուխտներով և օտարական զաղթականներով կ'աճի, իսկ Ատանա՝ ինքն իր մէջ ամփոփուելով։

—Հալէպցիին երեք գլխաւոր նշանաբաններն են, նուազածութիւն, սէր և պար, իսկ Ատանացիին բնաբանն է՝ երաժշտութիւն, ժամ և հաց։

—Հալէպցին նորասէր, զբօսասէր, շատախօս, խաղամոլ, բամբասող, բազուապաշտ, պատրաստաբան, վիճասէր, հեգնող, լեզուանի, հաճոյակատար և դիւրագրգիռ է, մինչ Ատանացին կը յականչուի իր ...

[...]

... կան տեսակէտով։

ԿԷՆՃ-ԶԱՐՕ

## ԴԱՏԸՍԻՒՂԻ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ

«Մանզումէ» ամէն առաւօտ պատրաստ կը գտնուի եկեղեցւոյ դիմաց Զըպուքճեան էֆ.ի դեղարանը, որ մեր գործակալութիւնը ստանձնած ըլլալով, անոնք որ կը փափաքին թերթիս բաժանորդագրուիլ, կրնան նաեւ հոն դիմել, ու ստանալ ընկալագիրը։

[...]

«ՄԱՆԶՈՒՄԷ»-Ի ԹԵՐԹՕՆԸ

ՔԱՍԻՄ 55

## Կնճռոտ Հանգոյց Մը

ՎԷՊ
Տեղական-բնանկարական կեանքէ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

Դ.

[...]

... ած կը խորհէր Պետրոս տրտում ու մտախոհ, երբ օրիորդին կառքը անցաւ զոր կը վարէր երէկուան տեսած կառապանը։ Անմիջապէս դուրս ցատկեց տեղէն և հագիւ ակնարկ մը ուղղած ...

[...]

մը իմանալով որ Իզմիրի Սէնտայի վարժարանին վերջին վիճակահանութենէն 300,000 ղրշ. շահող 8113 թիւ տոմսակին մէկ ութերորդ մասը Աւետիս

)( 110 )(

# ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ՆԱՐԵԿ

ԳՐԱԲԱՐ ԲՆԱԳԻՐԷՆ ԹԱՐԳՄԱՆԵՑ

ՔԱՍԻՄ

Որովհետեւ՝ ամէնէն առաջ՝ երբ իմ առաջին անգամ տեղծուող Նախահայրէս՝ փչումի բարձրագոյն շնորհը ողորմելի տխրականութեամբ եա առնուեցաւ, անիկայ մեղքերու գերութեանը

...

կողմնութեան դիւանին Ա. քարտուղար Ցարութիւն էֆ.ները իրենց պաշտօնին մէջ գեղծումներ գործած և պետական հասոյթները իւրացուցած ըլլալով, Նահանգին Իտարէի Ժողովին կողմէ յան ցաւոր ամբաստանուած են և պիտի դատուին։

## ՓԱՐԻԶԻ ՊՕՐՍԱՆ

BOURSE DE PARIS

12 Փետրուար 1903

| | | | |
|---|---|---|---|
| Ֆրանս. 3% | (3% Français) | 100 | 05 |
| Րէժի | (Tab. Turcs) | 372 | — |
| Գոնսօլիտ. | (R. Turque D.) | 30 | 05 |
| Երկաթուղի | (Lots Turcs) | 129 | — |
| Պանգ. Օթթ. | (Banque Ott.) | 604 | — |
| Թրանսվալ | (Transvaal) | 145 | 50 |

# ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԷՆ

## ԿԻԼԻԿԻԱՅԷՆ ԼՈՒՐԵՐ

ԱՏԱՆԱ, 22 Յուն. 1903

Կիրակի օր (19 Յունվր.) տուսւօտուն Ս. Ստեփաննոս եկեղեցիին մէջ Ս պատարագ մատոյց կաթող. ընտր. Փոխանորդ-Տեսուչ Գեր. Տ. Մովսէս Ս. Կէօմրիւքճեան, որուն կը սպասաւորէին

...

Մեր ջերմ շնորհաւորութիւնները երկու կողմերուն ալ։

Հարսնիքը տեղի պիտի ունենայ առաջիկայ երկուշաբթի, ժամը 7ին Կէտիք Փաշայի եկեղեցիին մէջ։

# ՍԱՐՐԱՖԻՅԷ

## ԳԱԼԱԹԱ ՊՕՐՍԱՍԸ

| | |
|---|---|
| Էսհ. Ըւմ. տիւն տգշ. գար. | 32—28$\frac{1}{2}$ |
| » » էն երւքսէք | 33 06 |
| » » էն աշաղը | 32 -26$\frac{1}{2}$ |
| Րումէլի շըմէն. տգշմ. գընտ. | 123 -$\frac{3}{4}$ |
| » » էն երւքսէք | 126 -$\frac{1}{8}$ |
| » » էն աշաղը | 123 $\frac{5}{8}$ |

## ՊԱՆԳԱ ԱԳՍԻՕՆԼԱՐԸ

| | |
|---|---|
| Րէժի ագսիօնը Օս. մր. | — |
| Սիրքէթ Ա. | 0—20 |
| » Բ. | —90 |
| Թրամվայ | 6 -15 |
| Ժուխանէ | 1 - 65 |
| Օպլիկասիօն Թրամվայ | 494 — |
| Ասիւրանս | 4—25 |
| Գօրբորասիօն | 0—06 |
| Գօմմէրսիալ | 0—11 .3 |
| Քրէտի Ֆօնսիէ Էժիբսիէն | 265—75 |
| Լօրիօն | 79 — |
| Պանգ Նասիօնալ տը Կրէգ | 419— |
| Թրանսվաալ | 144 — |
| Րընթըմ Թանվիլաթը | 497— |
| Անատօլը շըմ. ագսիօնը | 12 -10 |

## ԱԳՉԷԼԷՐԻՆ ՖԻՑԱԹԸ

| | |
|---|---|
| Օսմ. լիրասը 100 ղշ.տան | ղշ. բր. |
| Պէյազ մէճիտիյէ ֆարգը | 108—05 |
| Մէթալիք | 107— |
| Ինկիլիզ ալթունը | 110—05 |
| Ֆրանսըզ ալթունը | 87—30 |
| Բոլ | 90— |
| Գրէմից ալթունը | 51— 06 |
| Գարպօն գայմէսի | 8— 59 |

## ԷՎՐՕՊԱ ՊՕՐՍԱՍԸ

Լօնտրա 11 փետրվար

| | |
|---|---|
| Ինկ. էսհամը Ինկ. լիրասը | 93— |
| Օսմ. » գարանտը | 29 —87 |
| » » Բ | 60—50 |
| » » Գ | 33 - 50 |
| Օսմանլը Պանգասը | 14—12 |
| Մըսըր Տուլ. մութթահըտէ | 107—63 |
| Գուլկար խութիգրագը | 93— |
| Գամպիօ Բարիզ 3 այ վատէ | 25—36 |
| Թրանսվալ | 5—75 |
| Շարթրէթ | 3 - 43 |

Պէրլին 11 փետրվար

| | |
|---|---|
| Րումէլի շըմէնտըֆ. (մարգ) | 133—70 |
| Լօնտրա ինգլիզինէ գամպիօ | 20—465 |

Բարիզ 11 փետրվար

| | |
|---|---|
| Ֆրնս էսհ. 3%Ֆր. | 100—02 |
| Եէնի Օսմ. էսհամը գարանտը | 30—32 |
| Րումէլի շըմէնտըֆէրի | 129—75 |
| Իթալիա էսհամը | 102 - 60 |
| Բուիօրիթէ Թիւրք | 501— |
| Օսմանիյէ | — |
| Տուտն Օթօման | 476 — |
| Սրաննօլ | 90— 95 |
| Թրանսվալ | 146 — |
| Էժիբսիէն իւնիֆիէ | 109—60 |
| Զարթրէթ | 87 50 |

Վիէննա 11 փետրվար

| | |
|---|---|
| Լօնտրա ինգլիզինէ գամպիօ | 240 —10 |
| Րումէլի շըմէնտըֆէրի Ֆր. | 120 —70 |
| Օսմանլը Րէժի ագսիօնը | 348 - |

## ԳԱՄՊԻՕ

| | |
|---|---|
| Լօնտրա | 110— 12 |
| Բարիզ 3 այ վատէ | 22 80 |
| Ֆիօրէն Մանտաէլի | 21—76 |

## ՄԱՍՆԱՒՈՐ ԴԱՍ

Ֆրանսերէն «Վաճառականական Նա-

